



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆԻ ՏՈՒՆ-ՔԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Մայիսի 16-ին Աշտարակում բացվեց Պերճ Պրոշյանի Տուն-Քանգարանը: Բացմանը ներկա էին գրողներ և պարտիական ու հասարակական աշխատողներ:

Պրոշյանի Տուն-Քանգարանի բացման առթիվ հիւյժ ունեցավ Աշտարակի շրջափ-

տի գործկոմի նախագահ Յահրադյանը: Գրողների միության անունից ողջույնի խոսք ասաց Հր. Քոչարը. հիւյժներ ունեցան գրող Ստ. Զորյանը, ֆիլոսոֆիական գիտությունների դոկտոր Երվանդ Շահապիզը և ուրիշներ:

ՔՈՒՍԱՆՅԱՆԻ ՏՈՒՆ-ՔԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Ամեն օր բազմաթիվ այցելուներ են լինում Թումանյանի գլուղում, ուր գտնվում է մեծ բանաստեղծ Հ. Թումանյանի Տուն-Քանգարանը: Վերջերս այցելել են այնտեղ Լենինականի № 1 դպրոցի, Կալինինոյի մանկավարժական ուսումնարանի, Կիրովականի ու Ալավերդու շրջանների շատ դպրոցների ուսուցիչներ, ուսանողներ ու աշակերտներ:

Քանգարանում մեծ հետաքրքրություն են առաջացնում բանաստեղծի մանկության տարիների կահկարասիները, տնային իրերը, ինչպես նաև բազմաթիվ նկարներ, որոնք պատկերում են Թումանյանին իր ընտանիքում, ընկերների մոտ և այլն:

Առանձին տեղ են գրավում «Մուրճ», «Հասկեր» և այլ ամսագրերը, որոնցում ժա-

մանակին տպագրվել են Թումանյանի գործերը:

Վերջերս Քանգարանը ձևոք է բերել մի շարք էքսպոնատներ, դրանցից հետաքրքիր է Սեանի դպրոցի աշակերտների նվիրած նկարը և Թումանյանի տոհմացուցակը, որը կազմել է գլուղի դպրոցի դիրեկտոր, բանաստեղծի ազգակից Վ. Թումանյանը:

Քանգարանի վարիչ Թումանյանը նամակներ է ուղարկել Հ. Թումանյանի անվան բոլոր դպրոցների դիրեկտորներին՝ բանաստեղծի մահվան 25-ամյակի կապակցությամբ դպրոցներում եղած նյութերը Քանգարանին ուղարկելու համար:

ՑՈՒՑԱԶԱՆԴԵՍ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՅՅՈՒ ՄԱՀՎԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ

Ալ. Մյասնիկյանի անվան Պետական Հանրային գրադարանի սրահներից մեկում կազմակերպվել է ցուցահանդես՝ նվիրված հայ խոշորագույն վիպասան Բաֆֆու մահվան 60-ամյակին:

Ցուցահանդեսում գրված են հեղինակի «Սամվել», «Ռավիթ Բեկ», «Կայծեր», Պարս-

կական պատկերներ», «Զահրումար», «Հարեմ» և մի շարք այլ ստեղծագործություններ: Ցուցադրված են նաև Բաֆֆու երկերի ոտաներն լեզվով հրատարակությունները, ինչպես նաև Բաֆֆու մասին քննադատական մի քանի դործեր:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Հայկական ՍՍՌ-ի Պետական Պատմական Քանգարանում նախապատրաստական աշխատանքներ են տարվում հայ ժողովրդի XVII—XX դարերի պատմության բաժին բացելու համար: Այս բաժինն ունենալու է 12 ենթաբաժին—XVII—XX դարերի հայ-ու-

սական փոխհարաբերությունները», «Արևելահայաստանի Ռուսաստանին միանալը», «Հայ ժողովուրդը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում», «Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյու-

ցիան— հայ ժողովրդի ազնւագրութեան ուղի» և այլն: Նմանապէս կազմակերպվելու են բաժիններ. որոնք արտահայտելու են հայ ժողովրդի մասնակցութունը Հայրենական

Մեծ Պատերազմին և Սովետական Հայաստանը ստալինյան նոր հնգամյակի առաջին տարիներում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԱՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 20-ԱՄՅԱԿԸ

Երևանի հասարակայնութիւնը լայն կերպով նշեց հայ մեծ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի մահվան 20-ամյակը:

Մայիսի 10-ին Հայֆիլհարմոնիայի համերգային դահլիճում տեղի ունեցավ ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի համերգը նվիրված մեծանուն կոմպոզիտորի ստեղծագործութիւններին: Նվագախումբը ղեկավարում էր դիրիժոր Ս. Շաթիրյանը: Համերգից առաջ Ալ. Սպենդիարյանի կյանքի և ստեղծագործութեան մասին ներածական խոսք ասաց արվեստի վաստակավոր գործիչ Ս. Գասպարյանը:

Համերգի առաջին բաժնում նվագախումբը կատարեց Սպենդիարյանի «Երեք արմավենի»-ն, «Կոնցերտային վալս»-ը, «Կոնցերտային նախերգանք»-ը:

Երկրորդ բաժնում նվագախումբը կատարեց «Արիւմի էսփիզներ»-ի երկրորդ սերիան և սյուիտա «Ալմաստ» օպերայից:

Համերգին մասնակցում էր ժողովրդական արտիստուհի Տ. Սազանդարյանը, որը կատարեց Սպենդիարյանի «Ալջամա» և «Ես քեզ կնամբուրեմ» ուսմանները:

Ունկնդիրների խնդրանքով արտիստուհին կատարեց նաև «Այ վարդ»-ը և «Ղաւրի բըլբուլ»-ը:

Համերգը անցավ մեծ հաջողութեամբ:

Այդ նույն ծրագրով սիմֆոնիկ համերգը կրկնվեց մայրաքաղաքի Ստալինյան դպրոցի թատրոնում՝ բազմաթիւ ունկնդիրների ներկայութեամբ:

Սպենդիարյանի անվան լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական թատրոնում մայիսի 7-ին և 9-ին ցուցադրվեցին «Ալմաստ» օպերան և «Նաւեղութ» բալետը, որոնք մեծ հաջողութիւն ունեցան:

Ալ. Մյասնիկյանի անվան Պետական Հանրային գրադարանի սրահներից մեկում կազմակերպվել է ցուցահանդես՝ նվիրված հայ մեծանուն կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանի մահվան 20-րդ տարեդարձին:

Ալ. Սպենդիարյանի մահվան 20-ամյակին նվիրված այս ցուցահանդեսում բազմաթիւ դրքեր, բրոշյուրներ և իլյուստրացիոն նյութ-

ներ կան ցուցադրված, որոնք արտացոլում են մեծատաղանդ կոմպոզիտորի կյանքն ու երաժշտական գործունեութիւնը:

Այստեղ ցուցադրված են նաև Սպենդիար-



Ալեքսանդր Սպենդիարյան

յանի հրապարակած մի շարք նշանավոր երաժշտական ստեղծագործութիւնները:

Վերջերս Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Արվեստի պատմութեան և տեսութեան սեկտորը Երևանի Զայկովսկու անվան երաժշտական 10-ամյա դպրոցի դասատու Ն. Քուշնարովայից նվեր ստացավ Նշանավոր հայ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի շատ արժեքավոր ինքնագիր փաստաթղթերը, որոնք մինչև այժմ պահվում էին Քուշնարովայի ծնողների անձնական արխիւում: Ստացված փաստաթղթերի թվում

կան հինգ նամակ, հեղինակի ինքնակենսագրականները պատճեններ, 1916 թվի մարտի 27-ի հեղինակային համերգի ինքնագիր ծրագիրը, «Ղայքաբնակ»-ի առաջին հրատարակության (1899 թ.) մի օրինակը՝ հեղինակի մականգրությամբ:

Այս փաստաթղթերը նոր լույս են սփռում մեծ կոմպոզիտորի ստեղծագործական դեմքի պարզաբանման վրա: Առանձնապես հետաքրքրական է Սպենդիարյանի կարծիքը ռուսական երաժշտական դպրոցի մասին: Ահա թե ինչ է գրում այդ առթիվ նա իր ինքնակենսագրության մեջ. «Ես ինձ հաշվում եմ ռուսական այն դպրոցից, որն ստեղծված է Գլինկայի, Բալակիրևի, Բորոդինի, Ռիմսկի-Կորսակովի և ուրիշների կողմից: Այս կոմպոզիտորների, նաև Գլազունովի և Լյադովի ստեղծագործություններն ամենից ավելի են համապատասխանում իմ ճաշակին, բայց և այնպես իրենցը ես տեսնում եմ այն կոմպոզիտորի մեջ, որն իր գործունեությունը չի սահմանափակում ստեղծագործության որևէ բնագավառով, այլ հավասարապես գեղեցիկ է ստեղծագործում սիմֆոնիկ, օպերային և կամերային երաժշտության բնագավառներում: Այս իմաստով, չնոսելով արդեն Բեթհովենի և Մոցարտի մասին, իմ կարծիքով, իրենցին ավելի մոտիկ են կանգնած ռուս կոմպոզիտորներից Չայկովսկին, արտասահմանյաններից — դուցե թե Սեն Սանսը»:

Հատկապես արժեքավոր է այն նամակը, որը 1919 թվի օգոստոսի 25-ին գրված է Թբիլիսիի Հայկական երաժիշտ-թեորիտիկների ընկերությանը: Այդ նամակում կարդում ենք հետևյալը. «Ես ավելորդ չեմ համարում

տեղեկացնել ընկերությանը, որ իմ ստեղծագործությունը ես վճռել եմ տանել հարազատ Հայաստանին իրոք ծառայելու ճանապարհով, այսինքն քաղել նրա համար նյութեր հայկական ժողովրդական եղանակներից, պոեզիայից, գրականությունից, պատմությունից և այլն, և արդեն կանգնած եմ այդ ճանապարհին. այժմ ես գրում եմ օպերա Հովհ. Թումանյանի «Թմբկաբերդի առումը» պոեմի սյուժեով, չորս (համեմատաբար ոչ մեծ) գործողությամբ: Չեմ կարող չհաղորդել նաև իմ մեծ ցանկության մասին, որի իրագործումը հնարավոր կլինի միայն իմ տնտեսական գործերը կարգավորելուց և անշարժ ունեցվածքի մեծ մասը լիկվիդացնելուց հետո — ապագայում տեղափոխվել Հայաստանի գլխավոր կուլտուրական կենտրոնը, մի բան, որն անհրաժեշտ է վերահիշյալ ուղղությամբ իմ գործունեության հաջողության համար»:

Ինչպես հայտնի է Ալ. Սպենդիարյանը իրագործելով իր այդ վաղեմի ցանկությունը, 1924 թվին տեղափոխվեց Երևան և իր կյանքի վերջին տարիներին ինտենսիվ կերպով զբաղվեց ստեղծագործական աշխատանքով, հաջողությամբ գրելով «Ալմաստ» օպերայի երաժշտությունը, «Երևանյան էտյուդներ»-ը և այլ նշանավոր գործեր:

Ստացված փաստաթղթերի մեջ կան շատ արժեքավոր տեղեկություններ Սպենդիարյանի կենսագրության, ստեղծագործական ուղիների հարակալի վերաբերյալ: Այդ փաստաթղթերը կօգտագործվեն մեծանուն կոմպոզիտորի ճշգրտված և մանրամասն կենսագրությունը գրելիս:

ՍՍՏԼԻՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ՇՆՈՐՀՈՒՄ

Գիտության ասպարեզում 1947 թվին աչքի ընկնող աշխատությունների, այդ նույն թվին կատարված աչքի ընկնող գյուտերի և արտադրական աշխատանքի մեթոդների արժատական կատարելագործությունների համար ՍՍՏՄ Մինիստրների Սովետի որոշմամբ ստալինյան մրցանակներ են շնորհված մի շարք սովետական գիտնականների ու արտադրության նույնատուրների:

Ստալինյան մրցանակի արժանացածների թվում են գտնվում նաև հայ ժողովրդի զավակները:

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների ասպարեզում աչքի ընկնող աշխատությունների համար

Առաջին աստիճանի մրցանակ է շնորհված 200 հազար ռուբլու չափով

ԱՐՐԱՀԱՄ ԻՍՍՀԱԿԻ ԱԼԻՍԱՆՈՎԻՆ, — ակադեմիկոս և ԱՐՏԵՄԻ ԻՍՍՀԱԿԻ ԱԼԻՍԱՆՅԱՆԻՆ, — Հայկական ՍՍՏ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, Հայկական ՍՍՏ Գիտությունների Ակադեմիայի Ֆիզիկական ինստիտուտի դիրեկտոր, — կոսմիկական ճառագայթների ասպարեզում գիտական հետազոտությունների համար, որոնց արդյունքները շարադրված են 1945—1947 թվերին հրապարակված հետևյալ հոդվածներում. «Կոսմիկական ճառագայթների փափուկ կոմպոնենտի բաղադրությունը ծովի մակերեսից 3250 մետր բարձրության վրա», «Մեզոտրոնի և պրոտոնի մասսայի միջև միջանկյալ մասսայով մասնիկների գոյության մասին», «Վարիտոնների մասսաների սպեկտրները»:

Տեխնիկական գիտությունների ասպարե-

զուստ աչքի ընկնող աշխատությունների համար

Երկրորդ աստիճանի մրցանակ է շնորհված՝ 100 հազար ռուբլու չափով
ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻՆ, — Մոսկվայի Բառամանի անվան բարձրագույն տեխնիկական ուսումնարանի պրոֆեսոր, — ավտոմատ դադահանների նախագծման տեսական հիմունքները մշակելու համար, որոնք շարադրված են 1946 թվի վերջում հրապարակված «Ավտոմատ դադահանների նախագրծման տեսության հիմունքները» գիտական աշխատության մեջ:

Քիմիական գիտությունների ասպարեզում աչքի ընկնող աշխատությունների համար

Երկրորդ աստիճանի մրցանակ է շնորհված՝ 100 հազար ռուբլու չափով
ԽԱՆ ԼՅՈՒԴՎԻԿԻ ԿՆՈՒՆՅԱՆՅԻՆ, — ՍՍՌՍ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ, Քիմիական պաշտպանության ռազմական ակադեմիայի պրոֆեսոր, — օրգանական քիմիայի ասպարեզում կատարած հետազոտությունների համար, որոնց արդյունքները հրապարակված են 1946—1947 թ. թ. «Օրգանական միացությունների մեջ ֆտոր մտնելու մեթոդները», «Ալիֆատիկ օքսիդների և ֆտորային ջրածնի փոխգործողության մասին», «Ֆոսֆորային ջրածնի հետ օրգանական օքսիդների ռեակցիաների մասին» հոդվածների սերիայում:

Աչքի ընկնող գյուտերի և արտադրական աշխատանքի մերողների արմատական կատարելագործությունների համար

Առաջին աստիճանի մրցանակ է շնորհված՝ 150 հազար ռուբլու չափով
ԱՐՏՅՈՒ ՍՄԻԼԻՆ ՄԻԿՈՅԱՆԻՆ (մի ուրիշ ընկերոջ հետ), — ինքնաթիռաշինության գլխավոր կոնստրուկտոր, — մարտական ինքնաթիռի նոր տիպ ստեղծելու համար:

Երրորդ աստիճանի մրցանակներ են շնորհված՝ 50 հազար ռուբլու չափով

ՄԱՐԻԱ ԱՌԱՔԵԼԻ ԲԱՐԱՋԱՆՅԱՆԻՆ, — աշխատանքների ղեկավար, Երևանի ապակու գործարանի գլխավոր ինժեներ, ՎԱԼԵՆՏԻՆ ՎՊՐԻԴԻՈՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ, — Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի գլխավոր տեղակալ (մեկ երրորդ ընկերոջ հետ), — ապակու էլեկտրաձուլման հնոցների նոր կոնստրուկցիա և ձուլման նոր մեթոդ մշակելու համար:

ՎԱԼԵՆՏԻՆ ՕՍԻՊՈՎԻՉ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԻՆ (ուրիշ երեք ընկերների հետ), — ՍՍՌՍ Գիտությունների Ակադեմիայի դոկտորանտ, — նոր իներցիոն օսցիլոգրաֆների կոնստրուկցիաներ մշակելու և սերիական արտադրության մեջ արմատավորելու համար:

ԳՈՒՐԳԵՆ ԲՆՏՐՈՒԴԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ (ուրիշ չորս ընկերների հետ), — աշխատանքների ղեկավար, նավթահորատման սարքավորման կոնստրուկտորական բյուրոյի պետ, — նավթահորատման ծանր սարքերի կոնստրուկցիան կատարելագործելու և դրանց սերիական թողարկումը կազմակերպելու համար:

ՍՈՖԻԱ ՔՐԻՍՏԱՖՈՐԻ ՇԵԻՅԱՆԻՆ (ուրիշ երեք ընկերների հետ), — Հարավային և Արևմտյան շրջանների նավթարդյունաբերության միևնույն տեխնիկական վարչության ավագ ինժեներ, — նավթայուղերի որակի բարձրացման մեթոդ մշակելու համար:

ԳԵՈՐԳԻ ԳԵՈՐԳԵՎԻՉ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ (ուրիշ երեք ընկերների հետ), — «Ազնվածք-պրոեկտ» տրեստի գլխավոր տեխնիկոզ, — նավթի վերամշակման արդյունաբերական մեթոդները արմատապես կատարելագործելու համար:

Ստալինյան մրցանակի արժանացած հայ փոխականներին դրվատալից տողեր են նվիրում սովետական գիտության ականավոր ներկայացուցիչները:

Գիտության և գյուտարարության ասպարեզում Ստալինյան մրցանակների կոմիտեի նախագահ ակադեմիկոս Ա. Ն. Նեմանյանովը հետևյալն է ասել Ալիխանյան եղբայրների, Գ. Շահումյանի և Ի. Կոնյանցի մասին.

«Ֆիզիկայի ասպարեզում խոշորագույն իրադարձություն է հանդիսանում ակադեմիկոս Ա. Ի. Ալիխանովի և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Ի. Ալիխանյանի հայտնագործությունը: Կոսմիկական ճառագայթների ասպարեզում նրանց կատարած հետազոտությունները հանգեցրին մի ամբողջ շարք էլիմենտար նոր մասնիկների հայտնագործմանը: Այդ իր նըշանակությամբ միանգամայն բացառիկ հայտնագործությունը նոր լույս է սփռում նյութի կառուցվածքի վրա և նշում է միջուկային ուժերի պրոբլեմների լուծման ուղիները»:

...«Արտադրական պրակտիկայում ավելի ու ավելի լայնորեն կիրառվում են բարձր արտադրողական ավտոմատ դադահանների նորանոր կոնստրուկցիաներ: Դրանց հիմքում դրված է այդ դադահանների արտադրողականության տեսությունը, որ փայլուն կերպով մշակել է պրոֆեսոր Գ. Հ. Շահումյանը: Նրա աշխատության մեծ արժանիքը դադահանաշինության այնպիսի կարևորագույն սկզբունքների խնամքով հիմնավորումն է, ինչպես դադահանների աշխատանքի ռեժիմը, բանվոր-

րական դիրքերի թիվը, գործիքների կոնստրուկցիան։

...«ՍՍՍՐՄ» Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Ի. Լ. Կոնյանցի հետադոտությունները զգալի չափով հարստացրին քիմիայի միանգամայն նոր բնագավառը՝ ֆտոր-օրգանական միացությունները։ Նա մշակել է օրգանական միացությունների մեջ ֆտոր մտցնելու պարզ և ինքնատիպ մեթոդ— առաջ դա համարվում էր անիրագործելի»։

Ակադեմիկոս Լ. Լանդաուն հետևյալն է գրում Ալիխանյան եղբայրների մասին.

«Արտեմի Իսահակի Ալիխանյանը պատկանում է մեր երկրի ամենաականավոր ֆիզիկոսների թվին։ Լենինգրադի Պետական համալսարանի ուսանող եղած ժամանակ նա աշխատում էր ֆիզիկո-տեխնիկական ինստիտուտի լաբորատորիաներում։

1931 թվին Ալիխանյանն ավարտում է համալսարանը և ամբողջովին նվիրվում հետադոտական գործունեության, սկզբում Պ. Ի. Լոկիբսկու, իսկ այնուհետև իր ավագ եղբոր՝ Ա. Ի. Ալիխանովի ղեկավարությամբ։ Այդ տարիներին էլ դրվեցին երկու եղբայրների գիտական համագործակցության հիմքերը։

1938 թվին Ալիխանյանը զերազանց պաշտպանելով դիսերտացիան, ստանում է ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։ Այդ ժամանակ նա ուներ ավելի քան երկու տասնյակ տպագրված աշխատություն. այդ աշխատություններից մի քանիսը, մասնավորապես իր եղբոր համագործակցությամբ կատարած բետա ճառագայթների հետադոտությունը, համաշխարհային գրականության մեջ համարվում են կրաֆիկ։ 1941 թվին երկու եղբայրները արժանանում են Ստալինյան առաջին աստիճանի մրցանակի։

1942 թվին Ալիխանյանի գործունեության մեջ սկսվում է նոր ժամանակաշրջան։ Նա անցնում է այսպես կոչված կոսմիկական ճառագայթների, այսինքն տիեզերական տարածության բոլոր կողմերից երկրադնդի վրա ընկնող վիթխարի էներգիայով օժտված մասնիկների հոսանքի ուսումնասիրմանը։

1942 թվին, պատերազմի ամենաթեթև պահին, երբ գերմանացիները խցկվում էին դեպի Կովկաս, Ալիխանյան եղբայրներն իրենց առաջին արշավախումբն են կազմակերպում դեպի Արագած լեռը, կոսմիկական ճառագայթները ուսումնասիրելու նպատակով։

Շատ հնարամտություն, հաստատականություն և կամք էր անհրաժեշտ այդ արշավախումբերը կազմակերպելու համար։

1942 թվին Ալիխանյան եղբայրները դե-

ռևս նոր մարդիկ էին կոսմիկական ճառագայթների գիտա-հետադոտական ասպարեզում, բայց այնուամենայնիվ նրանց հաջողվեց այնպիսի փորձիկ ժամանակամիջոցում, ինչպիսին չորս տարին է, հիանալի արդյունքների հասնել այդ ասպարեզում։ Այդ գործում վիթխարի դեր խաղաց նրանց սերը դեպի էքսպերիմենտը և դրա հետ կապված էքսպերիմենտալ տեխնիկայի բարձր կատարելությունը։

Գործն սկսվեց հասարակ բանից։ Երկու լավ հայտնի ֆիզիկական գործիք, որոնք օգտագործվում էին կոսմիկական ճառագայթների ուսումնասիրման ժամանակ, տալիս էին տարբեր արդյունքներ, այն ժամանակ երբ դրանք ըստ որոշ հաշվարկումների պետք է տային միանման արդյունքներ։ Այդ հանգամանքը նկատել էին շատ ֆիզիկոս-կոսմիկոսներ։ Սակայն նրանք մեծ նշանակություն չէին տալիս դրան, այն վերաբերելով էքսպերիմենտի սխալներին։ Ալիխանյանները համատեղ էին իրենց էքսպերիմենտալ տեխնիկային և նրանց համար պարզ էր, որ այդպիսի տարբերությունը պետք է ինչ որ խոր պատճառ ունենար։

Որոշումները շարունակվեցին չորս տարի և վերջ ի վերջո հանգեցին յուրաքանչյուր էքսպերիմենտատոր ֆիզիկոսի համար թերևս ամենագալթակղիչ հայտնագործության— նոր մասնիկների հայտնագործության։

Ֆիզիկայի մեջ մասնիկներ շատ քիչ կան։ Դեռևս 15 տարի առաջ հայտնի էին ընդամենը երկու հիմնական մասնիկ՝ էլեկտրոն և պրոտոն։ 1938 թվին հայտնագործվեցին ևս երկու մասնիկ։ Պրոտոնի նման, բայց էլեկտրական լիցքից զուրկ նեյտրոն մասնիկը և պոզիտրոն, այսինքն հակադիր նշանի լիցք ունեցող էլեկտրոն։ Մի քանի տարուց հետո հայտնագործվեց մեզոտրոն, այսինքն իր կշռով պրոտոնի և էլեկտրոնի միջև մի միջանկյալ մասնիկ։ Իսկապես ասած, դա երկու մասնիկ է, որովհետև մեզոտրոններն ունենում են երկու նշանով լիցք։

Այսպիսով, մինչև 1946 թվիվ հայտնագործված էր վեց մասնիկ և այդ վեց մասնիկներին Ալիխանյաններն ավելացրին ևս երկու մասնիկ, մի նվաճում, որով իրավամբ կարող է պարծենալ յուրաքանչյուր ֆիզիկոս։

Երկու եղբայրների աշխատանքի այդ ընդհանուր գծի հետ միասին Ալիխանյանը ունի նաև իր սեփական ուղղությունը, որտեղ նրան նույնպես հաջողվել է շատ բան ձեռք բերել։

Ֆրանսիական ֆիզիկոս Օմեն մթնոլորտի

մեջ հայտնագործեց կոսմիկական ճառագայթների ազդեցության տակ ծագող մասնիկների հոսանքներ, այսպես կոչված հեղեղներ: Օժեի այդ հեղեղները ծածկում են մի քանի հարյուր մետր տրամագիծ ունեցող հրապարակ և պարունակում են մինչև միլիարդ մասնիկներ: Ալիխանյանը Օժեի հեղեղները ենթարկեց հետազոտման, ըստ որում նա ոչ միայն նոր, հետաքրքիր տեղեկանքներ ստացավ այդ հեղեղների մասին, այլ և դրա հետ միասին հայտնաբերեց նոր տիպի հեղեղներ, որոնք նա անվանեց նեղ հեղեղներ (քանի որ այդ հեղեղների տրամագիծը հասնում է ընդամենը մի քանի մետրի): Այդ հետաքրքիր երևույթի հետագա ուսումնասիրությունը շատ նոր բան է խոստանում:

Այս աշխատությունները Ալիխանյանին առաջ են քաշում սովետական ֆիզիկոսների առաջավոր շարքերը: Նա 1943 թվին ընտրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ:

1947 թվին հրապարակած «Կոսմիկական

ճառագայթների փափուկ կոմպոնենտի բաղադրությունը ծովի մակերեսից 3250 մետր բարձրության վրա», «Մեզոտրոնի և պրոտոնի մասսայի միջև միջանկյալ մասնավոր մասնիկների գոյության մասին» և «Լարի-տրոնների մասսաների սպեկտրները» գիտական աշխատությունների համար ակադեմիկոս Աբրահամ Իսահակի Ալիխանյանը, ինչպես նաև նրա կրտսեր եղբայր Արտեմի Իսահակի Ալիխանյանը 1948 թվին կրկին անգամ արժանացել են Ստալինյան առաջին աստիճանի մրցանակի:

Ալիխանյանը շատ ուշադրություն է նվիրում ֆիզիկական գիտության զարգացմանը իր հայրենիքում՝ Հայաստանում: Նա հանդիսանում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ֆիզիկական ինստիտուտի դիրեկտոր: Այդ ինստիտուտում դաստիարակվում են նորանոր ֆիզիկոսներ, որոնք այս կամ այն կերպ կապված են Արագածի արշավախմբի հետ և որոնք չեն կարող Ալիխանյանից չվարակվել ֆիզիկայի նկատմամբ տածվող կրքոտ սիրով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԵՎ ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱԴԵՄԻԱՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ԲԱԺԱՆՍՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՍԻԱՆ

Անցյալ տարվա դեկտեմբերի վերջերին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ղեկավարի Թբիլիսի այցելելու ժամանակ նշվեց, իսկ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ղեկավարի մի քանի այցելելու ժամանակ, սույն տարվա հունվարին, վերջնականապես որոշվեց իրադրոծել երկու ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ սեսիաներ անցկացնելու պրակտիկան, որը պետք է գիտական լիակատար և մշտական կոնտակտ սահմանելու միջոց ծառայի և այդպիսով ապահովի երկու ակադեմիաներին հետաքրքրող պրոբլեմների մշակումը դրանց համատեղ քննարկման պրոցեսում:

Հայկական և Վրացական Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների առաջին համատեղ սեսիան տեղի ունեցավ մայիսի 22-ից մինչև 30-ը: Մայիսի 22—25-ը սեսիան անցկացվեց Թբիլիսիում, իսկ 27—30-ը Երևանում: Սեսիայի ընթացքում լավեցին Հայաստանի և Վրաստանի գիտնականների 24 գիտական ղեկուցում պատմության, հրապարակության, լեզվի և գրականության վերաբերյալ: Ինչպես Թբիլիսիում, այնպես էլ Երևանում սեսիան սկսվեց ու ավարտվեց

պլենար նիստերով. սեսիայի ընթացքում տեղի ունեցան պատմագիտական և ֆիլոլոգիական սեկցիաների նիստեր:

Սեսիայի աշխատանքի պլանը կառուցված էր այնպես, որ հայ գիտնականների ղեկուցումների մեծ մասը լավեց Թբիլիսիում, իսկ վրաց գիտնականների ղեկուցումները մեծ մասը լավեց Երևանում:

Սեսիային հրավիրված էին նաև Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի գիտնականները:

Մայիսի 22-ին երեկոյան, Թբիլիսիում, Մարքսի-Էնգելսի-Լենինի ինստիտուտի Ֆիլիալի դահլիճում բացվեց Հայկական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների գիտական համատեղ սեսիան: Սեսիան նեոածական ճառով բառաբեց Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի միգր-պրեզիդենտ Ա. Գ. Շանիձեն: Նա խոսում է այն պայմանների մասին, որոնք ստեղծված են սովետական երկրում գիտական բեղմնավոր աշխատանքի համար:

— Սովետական գիտության զարգացման շահերը, — ասում է նա, — պահանջում են մեր երկրի գիտնականների սերտ համագոր-

ծակցություն: Տվյալ սեփական նպատակ ունի էլ ավելի ամրապնդելու Վրաստանի ու Հայաստանի գիտնականների կապն ու համագործակցությունը, որպես երկու եղբայրական ռեսպուբլիկաների ժողովրդների բարեկամության վառ արտահայտություններից մեկը:

Այնուհետև, «Անդրկովկասյան Ֆեդերացիայի դերը Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում» թեմայով զեկուցում կարդաց ավագ գիտ. աշխատող Ա. Յա. Կիկվիձեն: Հեծ հետաքրքրությամբ լսվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Գ. Ղափանցյանի զեկուցումը «Փոքր Ասիայի և հարևան երկրների ռուպոնոմիկայի մասին, որոնք իրենց աշխարհագրական անունների մեջ պահպանել են քարթվելական ցեղերի լեզվական մրնացուկները»: Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ի. Գրիշչաշվիլին իր զեկուցումը նվիրեց «Ժողովուրդների բարեկամության գաղափարին վրացական և հայկական պեղարվեստական պրականության մեջ»:

Մայիսի 23-ին Հայկական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ սեփական մասնակիցները այդելեցին Գորի քաղաք և դիտեցին այն տունը, ուր ծնվել ու իր մանկություն է անցկացրել Ի. Վ. Ստալինը: Այնուհետև սեփական մասնակիցները եղան Մցխեթում՝ Վրաստանի հնագույն մայրաքաղաքի հնագիտական պեղումների վայրում:

Մայիսի 24-ին տեղի ունեցավ պատմության սեկցիայի նիստը: Սուշինը լսվեց պատմական գիտությունների թեկնածու Ս. Նրեմյանի զեկուցումը «Հայաստանի հասարակական կառուցվածքի հիմնական հատկանիշները հելենիստական էպոխայում» թեմայի մասին: Հայ, հույն և վրացի պատմաբանների ընդարձակ, կոնկրետ նյութի, ինչպես և հնագիտական պեղումների ընթացքում հայտարարված նյութերի հիման վրա զեկուցողը ամեց մեր էոաչի առաջին դարերում հայկական պետության ներքին կառուցվածքի մերուծումը: Զեկուցումը աշխույժ միժարանություն առաջադրեց, որին մասնակցեցին Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրիդիդենտ Ա. Շանիձեն, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Գ. Ղափանց-

յանը, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ն. Բերձենիշվիլին և ուրիշներ: Ելույթ ունեցողները նշեցին, որ զեկուցողը նոր և արժեքավոր շատ բան տվեց նշված էպոխայի Հայաստանի և Վրաստանի պատմության ուսումնասիրման համար:

Այնուհետև առավոտյան նիստում լսվեց Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի ավագ գիտ. աշխատող Ն. Մախարաձեի զեկուցումը՝ «Դեկաբրիստները և վրացական հասարակայնությունը», Զեկուցողը պատմեց դեկաբրիստների ունեցած կապերի մասին Վրաստանի առաջավոր գործիչների հետ և վրացական հասարակության տրամադրությունների մասին 1825 թվի դեկտեմբերյան ապստամբության նախօրյակին և նրանից հետո:

Մայիսի 24-ի երեկոյան տեղի ունեցավ լեզվաբանության սեկցիայի նիստը: Սույաթ Նովայի կյանքի ու ստեղծագործության մասին հետաքրքիր զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի ավագ գիտ. աշխատող Մ. Մորուսը: Իր, փաստերով հագեցված, զեկուցման մեջ նա նշանավոր պոետի կենսագրությանը վերաբերող նոր նյութեր մատնացույց արեց և տվեց նրա ստեղծագործության առանձին շրջանների բնութագրումը: Այս զեկուցման շուրջը եղած վիճաբանությունների ընթացքում ելույթ ունեցողներ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Կ. Կեկելիձեն և Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Բարամիձեն նշեցին, որ զեկուցումը մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Հայ լեզվի էվոլուցիայի, հնչունային տեսակետից, մասին զեկուցում կարդաց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Հ. Աճառյանը:

Սեսիան մեծ հետաքրքրությամբ լսեց պատմական գիտությունների թեկնածու Ս. Հարությունյանի զեկուցումը սովետահայ գրականության մեջ գրական հերոսի կերպարի մասին: Զեկուցումը հանդիսացավ սովետահայ գրողների ստեղծագործական ուղու և նրանց ստեղծած գրական հերոսների կերպարների խոր մերուծում:

Մայիսի 25-ին տեղի ունեցավ պատմության սեկցիայի նիստը: Լսվեցին ավագ գիտ. աշխատող Մ. Բերձենիշվիլու «Իոն Խելաշվիլու քաղաքական և հասարակական գաղափարները» և պատմական գիտությունների թեկնածու Կ. Ղաֆադարյանի «Պեղումներ

Դվին քաղաքում» զեկուցումները:

Երեկոյան տեղի ունեցավ սեսիայի ան-
նար նիստը, որտեղ լսվեցին Վրացական ՍՍՌ
Գիտությունների Ակադեմիայի իսկական ան-
դամ Ա. Զիկուրավայի «Պատմականության
պրոբլեմը ժամանակակից արտասահմանյան
լինգվիստիկայում» և Հայկական ՍՍՌ Գի-
տությունների Ակադեմիայի իսկական ան-
դամ Ա. Հովհաննիսյանի «Հայ-ոտական
հարաբերությունները 18-րդ դարի 80-ական
թվականներին» զեկուցումները: «Սկյութա-
ցիները Անդրկովկասում» զեկուցումով հան-
դես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների
Ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Պիոտ-
րովսկին:

Մայիսի 26-ին սեսիայի մասնակիցները
ճանապարհվեցին Երևան, այնտեղ շարու-
նակելու համար իրենց աշխատանքը:



Համատեղ սեսիայի մասնակիցները
Երևան ժամանելով, մայիսի 27-ին, քերհուր.
այցեկցին Կարմիր բլուրը, որտեղ դիտեցին
Ուրարտական հուշարձանի պեղումները:

Մայիսի 27-ի երեկոյան Հայֆիլհարմոնի-
այի դահլիճում տեղի ունեցավ համատեղ
սեսիայի երրորդ պինար նիստը: Բացի սե-
սիայի մասնակիցներից ու ժամանած հյու-
րերից դահլիճում ներկա էին գիտության,
արվեստի գործիչներ, գրականագետներ ու
պարտիական-սովետական աշխատողներ:

Պինար նիստը բացեց ՀՍՍՌ Գիտություն-
ների Ակադեմիայի հասարակական գիտու-
թյունների բաժանմունքի ակադեմիկոս-քար-
տուղար Գ. Ղափանցյանը:

— Այսօր մեր ռեսպուբլիկայի մայրաքա-
ղաքում, — ասաց նա, — մենք շարունակում
ենք եղբայրական երկու ռեսպուբլիկաների
Գիտությունների Ակադեմիաների հասարա-
կական գիտությունների բաժանմունքների
համատեղ սեսիան, որ հաջողությամբ ըս-
կվելից և փայլուն կերպով անցկացվեց Թբի-
լիսիում: Սեսիայի աշխատանքը ցույց տը-
վեց, որ միայն ՍՍՌՄ ժողովուրդների եղ-
բայրական համագործակցության պայման-
ներում հնարավոր է դարձել այնպիսի շփում
երկու ակադեմիաների միջև՝ Հայաստանի և
Վրաստանի պատմության, ինչպես նաև հայ-
կական-վրացական ֆիլոլոգիայի հիմնական
պրոբլեմների համատեղ մշակման գործում:
Ակադեմիկոս Ն. Յա. Մառը իր ժամանակին
ասել է կուլտուրայի և պատմության հարցե-
րի համատեղ լուծման անհրաժեշտության
մասին: Բայց հասարակական-քաղաքական
պայմանները ռևոլուցիայից առաջ արգելա-

կում էին այդ իղձի իրականացմանը: Եվ
միայն այժմ, սովետական իշխանության օ-
րոք, լենինյան-ստալինյան ազգային քաղա-
քականության հաղթանակի ժամանակ ըս-
տեղծվել են բարենպաստ պայմաններ ան-
դրկովկասյան եղբայրական ռեսպուբլիկա-
ների ժողովուրդների կուլտուրական և գի-
տական իսկական համագործակցության
համար:

Այնուհետև «Միջօրեականի աստիճանա-
յին չափումների մասին ըստ հին հայկական
աղբյուրների» թեմայով զեկուցումով հանդես
եկավ ակադեմիկոս Հ. Մանանդյանը: Զե-
կուցման շուրջը բացվեց մտքերի փոխանա-
կություն:

Նկատի ունենալով Վրացական ՍՍՌ Գի-
տությունների Ակադեմիայի իսկական ան-
դամ և ՍՍՌՄ Գիտությունների Ակադե-
միայի թղթակից-անդամ Գ. Վ. Մերեթելու
հիվանդությունը, «Արմազի» դրերը և վրաց
այբուբենի ծագման պրոբլեմը» թեմայով
նրա զեկուցումը կարգաց ֆիլոլոգիական
գիտությունների թեկնածու Շ. Վ. Զիգուրին:

Դրանով ավարտվեց երեկոյան նիստը:
Վերջում մեծ համերգ տրվեց:



Մայիսի 28-ին Հայկական ՍՍՌ Գիտու-
թյունների Ակադեմիայի կոնֆերենց-դա-
լիճում տեղի ունեցավ պատմության սեկ-
ցիայի նիստը: Լսվեց պատմական գիտու-
թյունների թեկնածու Գ. Ֆ. Գոբեջիշվիլու
զեկուցումը՝ «Վրացական ՍՍՌ Գիտություն-
ների Ակադեմիայի Պատմական ինստիտու-
տի հնագիտական պեղումները տասը տար-
վա ընթացքում» թեմայով: Զեկուցումը ու-
ղեկցվում էր Վրաստանի տերիտորիայում
պեղումների ժամանակ հայտարարված հը-
նագիտական հիշատակարանների ցուցա-
դրումով:

Այնուհետև «Էրիսթավի Ասպուրաղը և
Անդրկովկասի կուլտուրական կապերը հյու-
սիսի հետ» զեկուցումով հանդես եկավ Վրա-
ցական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
թղթակից-անդամ Լ. Ա. Մացուկիշվիլը: Զեկու-
ցումների շուրջը տեղի ունեցան մտքերի
փոխանակություններ: Դրանով առավոտ-
յան նիստը ավարտվեց:



Մայիսի 28-ի երեկոյան տեղի ունեցավ
ֆիլոլոգիական սեկցիայի նիստը: «Հայ լեզվի
պատմության պիրիոդիզացիան» թեմայով
զեկուցեց Հայկական ՍՍՌ Գիտությունների

Ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ղարիբյանը: Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Շոթա Ռուսթավելու անվան Գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Բ. Ժղենտիի զեկուցումը նվիրված էր վրացական սովետական գրականության պատմության պերիոդիզացիային: Հայ-վրացական լեզվական նմանությունների մասին զեկուցեց Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Մուրվալյանը: Այս զեկուցումների շուրջը մտքերի փոխանակություն տեղի ունեցավ:

Մայիսի 29-ի առավոտյան շարունակվեց պատմության սեկցիայի նիստը: Լսվեց չորս զեկուցում: Պատմական գիտությունների թեկնածու Ա. Մնացականյանը զեկուցեց «Հայ ժողովրդի մասնակցությունը 1941—1945 թ. թ. Հայրենական Մեծ Պատերազմում» թեմայի մասին:

«10-րդ դարի վրացական մի քանի նկարագրողված ձեռագրերի մասին» զեկուցեց արվեստագիտական գիտությունների թեկնածու Ռ. Շմելյինգը:

«Ջկան պաշտամունքի հարցի առթիվ լուս Տրիալենի արշավախմբի նյութերի» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների թեկնածու Ա. Ի. Ռոբակիձեն:

Պատմական գիտությունների թեկնածու Գ. Ա. Մելիկիշ-Վրին հանդես եկավ «Մուսասիրը և Ուլարտում» զեկուցումով: Դրանով ավարտվեց առավոտյան նիստը:



Մայիսի 29-ի երեկոյան, Հայֆիլհարմոնիայի դահլիճում տեղի ունեցավ եղբայրական երկու ռեսպուբլիկաների Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ գիտական սեսիայի վերջին պլենար նիստը:

«Շարքերի տեսությունը և նրա կոտառումը դարբար լեզվի խոնարհման մեջ» թեմայով զեկուցումը հանդես եկավ վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի նախագահ Ա. Գ. Շանիձեն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մոսկվայում տեղի ունեցավ Գիտությունների Ակադեմիայի համաձայնեցուցիչ խորհրդի սեսիան: Համաձայնեցուցիչ խորհրդի խնդիրն է՝ ապահովել ռեսպուբլիկական ակադեմիաների աշխատանքի փոխադարձ համաձայնեցումը, կատարված աշխատանքի և

Այնուհետև սեսիայում հրապարակվեց որոշում, որտեղ ասված է, որ Հայկական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ գիտական սեսիան հանդիսացավ լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակի և Անդրկովկասի ռեսպուբլիկաների գիտության ու կուլտուրայի ծաղկման վառ ցուցադրում: Սեսիան հնարավորություն տվեց համատեղ կերպով քննարկել վրացագիտության ու հայագիտության մի շարք հանգուցային պրոբլեմներ և անձնական փոխադարձ կապ հաստատել երկու ակադեմիաների իսկական անդամների, թղթակից-անդամների ու գիտական առաջատար աշխատողների միջև: Այնուհետև որոշման մեջ նշված է, որ երեք ակադեմիաների հետագա համատեղ բեղմնավոր աշխատանքի համար հրկուհերե տարին մեկ անգամ անցկացնել Աղբյուրի հայրենական ՍՍՌ, Վրացական ՍՍՌ և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ սեսիաներ:

Դրանով վրացական ՍՍՌ և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ գիտական սեսիան ավարտեց իր աշխատանքը:



Համատեղ գիտական սեսիայի աշխատանքի ավարտումից հետո վրացական ու ադրբեջանական գիտնականները, Հայաստանի գիտական աշխատողների ուղեկցությամբ, այցելեցին Զվարթնոցը, Էջմիածինը, Աշտարակը, Դվինը: Նրանք Սպենդարյանի անվան օպերայի ու բալետի թատրոնում դիտեցին «Խանդավ» բալետը:

Մայիսի 31-ին սեսիայի մասնակիցները եղան Սևանում, ուր դիտեցին կղզու վրայի պատմական հուշարձանները: Սևանից Վրաստանի գիտնականները մեկնեցին Թբիլիսի, իսկ Աղբյուրի գիտնականները՝ Բաքու:

ապագայի պլանների փոխադարձ խնդրամարմին:

Համաձայնեցուցիչ խորհրդի կազմի մեջ մտնում են բոլոր ռեսպուբլիկական ակադեմիաների պրեզիդենտները և վիցե-պրեզիդենտները: Վերջին սեսիան, որը տեղի

ունեցաւ ՍՍՌՄ Գիտութիւնների Ակադեմիայի պրեզիդենտ Ս. Ի. Վավիլովի նախագահությամբ, նվիրում էր միութենական ռեսպուբլիկաների գիտութիւնների ակադեմիաների 1947 թվի գիտական գործունեության վերաբերյալ հաշվետվութիւնների ըննարկմանը:

Խորհրդի նիստերում, որոնք տեղի էին ունենում ՍՍՌՄ Գիտութիւնների Ակադեմիայի նախագահության շենքում խորհրդի անդամների հետ միասին ներկա էին նաև միութենական Ակադեմիայի բաժանմունքների և ինստիտուտների ղեկավար աշխատողները և Մոսկվայի գիտական հասարակայնության ներկայացուցիչները:

Ակադեմիկ Բրուսիլի ՍՍՌՄ Գիտութիւնների Ակադեմիայի գործունեութիւնը վերաբերյալ զեկուցումից հետո, համաձայնեցուցիչ խորհուրդն անցավ միութենական ռեսպուբլիկաների գիտութիւնների ակադեմիաների զեկուցումների ըննարկմանը: Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի գործունեութիւնը վերաբերյալ զեկուցումով հանդես եկաւ նրա պրեզիդենտ Վ. Համբարձումյանը: Զեկուցողը նշեց, որ հաշվետու տարին հանդիսացաւ Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի աշխատանքի զգալի խորացման ու ընդարձակման տարի: Առանձնապես պետք է նշել ֆիզիկո-մաթեմատիկական գիտութիւնների ասպարեզում գիտնականների ձեռք բերած հաջողութիւնները: Մեր Ակադեմիայի իսկական անդամներ, Ստալինյան մրցանակի լաուրեատներ Ալիխանյան եղբայրների կողմից կոսմիկ ճառագայթներում մի շարք նոր մասնիկների՝ վարիտրոնների հայտնագործումը հսկայական նշանակութիւն ունի ամբողջ ժամանակակից ֆիզիկայի համար: Այդ դուտը արմատական հեղաշրջում է բուսեղծում տարրական մասնիկների մասին մեր ունեցած պատկերացումների միջև և պատկանում է վերջին տասնամյակում համաշխարհային ֆիզիկայի ձեռք բերած խոշորագույն նվաճումների թվին:

Այդ աշխատանքը մեր գիտնականները կատարել են ՍՍՌՄ Գիտութիւնների Ակադեմիայի աշխատակիցների սերտ համագործակցութիւնով:

Յունկցիաների մոտավոր պատկերացման պրոբլեմին վերաբերող մի շարք խնդիրների լուծման վրա հաջող աշխատանք է կատարել Ակադեմիայի մաթեմատիկական սեկտորը, նրա ղեկավար, Ակադեմիայի իսկական անդամ Ա. Շահինյանը:

Լույսի ցրման ֆեոդիայի բնագավառում մի շարք աշխատանքներ է կատարել աստ-

րո-ֆիզիկական լաբորատորիան:

Գործնական մեծ նշանակութիւն ունեն երկրաբանական ինստիտուտի աշխատանքները, մասնավորապես երկրաբանական գիտութիւնների դոկտոր Մաղաբյանի մենագրութիւնը Հայաստանի մետաղների մասին, որն ավարտվել է անցյալ տարի:

Շատ զգալի դեր է խաղացել նաև շինարարական կառուցվածքների ինստիտուտը նոր կոնստրուկցիաներ և տեղական նյութերից շինարարական դետալներ մշակելու ասպարեզում (Գրիգորյան, Սիմոնյան և ուրիշներ):

Ջրա- էներգետիկ ինստիտուտում ավարտվել է Սեանի և Զանգուի ջրերի օգտագործման զլխավոր պլանի մշակումը էլեկտրիֆիկացիայի և ոռոգման նպատակով:

Գյուղատնտեսական գիտութիւնների ասպարեզում պետք է նշել Հայկական ՍՍՌ ամպելոգրաֆիայի հրատարակումը:

Շարունակելով իր ելույթը, ակադեմիկոս Համբարձումյանն ասաց, որ հասարակական գիտութիւնների ասպարեզում անցյալ ժամանակաշրջանը հանդիսացաւ վերակառուցման ժամանակաշրջան:

Մեծ նշանակութիւն ունեն պատմութիւն ինստիտուտի կողմից Դվինում և Կարմիր բլուրում կատարված հնագիտական պեղումները, ինչպես նաև Հայրենական Մեծ Պատերազմի պատմութիւնը վերաբերյալ մի շարք գրքերի հրատարակումը:

Բավականին ինտենսիվ աշխատանք է կատարվել Խաչատուր Աբովյանի երկերի ակադեմիկ հրատարակութիւն ուղղութիւնով, որի մահվան հարյուրամյակը տոնվելու է այս տարի աշնանը: Լեզվի ինստիտուտը հրատարակել է հայ-ռուսերեն համառոտ բառարան, որը պարունակում է 30 հազար բառ: Ներկայումս պատրաստվում է ռուս-հայերեն բառարանի հրատարակութիւնը ավելի քան հարյուր հազար բառով:

Վ. Համբարձումյանը իր ելույթում նշեց մի շարք օժանդակ հաստատութիւնների, մասնավորապես հիմնական գրադարանի, հրատարակչութիւն, տեխնիկական զինվածութիւն և այլ հաստատութիւնների զարգացման մասին:

1947 թվին տեղի է ունեցել նաև ինստիտուտների և լաբորատորիաների կառուցումը, որոնցից մի քանիսը հանձնվել են շահագործման:

Վերջում ակադեմիկոս Համբարձումյանն ասաց.

— Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի գործունեութիւնը զարդանում է ռուս նորոգողուն գիտնականների հետ ամենասերտ կապ պահպանելով: Պարտիան

և կառավարությունը ստեղծել են բոլոր պայմանները սովետական դիտության ծաղկման համար և մեր խնդիրն է դարձնել ռեսպուբլիկական դիտությունների ակադեմիաները դիտական առաջնակարգ կենտրոններ: Թերևս ռեսպուբլիկական ակադեմիաներում այդ բանը մենք կարող ենք անել նեղ բնագավառներում, բայց այն, ինչ որ անում ենք, պետք է ունենա բարձր մակարդակ:

— Այդ, ինչ որ մենք տեղեկացանք Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի գեկուցումից և մյուս ընկերների ելույթներից, — ասաց իր ելույթում ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Ս. Ի. Վալիլովը, — պարզ ցույց է տալիս, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան հիմնականում գտնվում է միանգամայն ճիշտ, շատ լավ ուղու վրա և, որպես անցյալ տարվա աշխատանքների արդյունք, կարող է ցույց տալ մի շարք աչքի ընկնող, երբեմն բացառիկ խոշոր հաջողություններ: Կարծում եմ, որ այդ բանը մենք պետք է նշենք: Ամեն ինչից պարզ է, որ Հայկական Ակադեմիան

ամրապնդվում է և առաջիկա տարիներին կդառնա մեր սովետական հիմնական հաստատություններից մեկը:

Այնուհետև Ս. Ի. Վալիլովը պաշտպանեց Մատենադարանում պահվող ձեռագրերը հրատարակելու հարցը, որն արծարծել էր ակադեմիկոս Ի. Ի. Մեշչանինովը:

— Քանի որ, — ասաց նա, — այդ հարցում մեծապես շահագրգռված են ոչ միայն հայ, այլև բոլոր պատմագետները, համապատասխան որոշում ընդունենք և դիմենք ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիային՝ առաջարկելով հրատարակել այդ ձեռագրերը: Այդ հարցը պետք է լուծվի:

Այսպես, ամեն տարի Մոսկվայում ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի նախագահության շենքում հավաքվում են ռեսպուբլիկական գիտությունների ակադեմիաների ղեկավարները, ամիոսիում են արդեն ձեռք բերված հաջողությունները, նշում թերությունները և գծում այն ուղիները, որոնցով պետք է ընթանա մեր մեծ Սովետական պետության առաջավոր սոցիալիստական դիտության հետագա զարգացումը:

ԻՆՔՆՈՒՍ ԱՐՎԵՍԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից արվեստի գործերի Կոմիտեն և Ն. Կ. Կրուպսկայայի անվան Համամիութենական Ժողովրդական ստեղծագործության Տունը Մոսկվայում կազմակերպել են կիրառական արվեստի և կերպարվեստի ինքնուրույն վարպետների համամիութենական ցուցահանդես, որի բացումը տեղի ունեցավ հունիսի 22-ին:

Այդ ցուցահանդեսին մասնակցում է նաև Հայկական Ժողովրդական ստեղծագործության Տունը, որը ցուցահանդես է ուղարկել ավելի քան 90 լավագույն էքսպոնատներ: Հայաստանից ուղարկված էքսպոնատները ուղարկվում են իրենց բարձր արվեստով, գաղափարական բովանդակությամբ, թեմատիկայով, կոմպոզիցիայով: Ցուցահանդեսում դրսևորված է հայ կիրառական ար-

վեստն ու կերպարվեստը իր ամբողջությամբ և այդ էքսպոնատների հիման վրա հանդիսատեսը լրիվ պատկերացում է ստանում հայ ժողովրդական ինքնագործ արվեստի մասին: Իրենց թեմատիկայով և կոմպոզիցիայով հատկապես ուղարկվում են հայկական գորգերը, առանձնապես ընկեր Ստալինի պորտրեն (գործ Ա. Մատինյանի), «Ինդուստրիալ» (գործ Ե. Մկրտչյանի): Զարմանալի վարպետությամբ են պատրաստված Սովետական Միության հիմնը փոխակրյա փորագրությունը (գործ Ա. Պողոսյանի), ինչպես նաև Փ. Ավետիսյանի ձեռագործները: Առանձին հետաքրքրություն է առաջացրել արծաթագործ փորագրիչ Հրաչյա Ստեփանյանի գործը արծաթյա տախտակի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԶԱՋ ՆՎԱԳԱՄԲԻ 10-ԱՍՅԱԸ

Լրացավ Հայաստանի Պետական ջազնվագախմբի գոյության 10 տարին: Նրա կազմակերպիչ ու գեղարվեստական ղեկավար, արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Ա. Ալվազյանը բնութագրելով ջազնվագախմբի գործունեությունը 10 տարվա ընթացքում, ասաց.

— Իր գոյության տասը տարվա ընթացքում ջազնվագախումբը մեծ աշխատանք է կատարել աշխատավորների զեղարվեստական սպա-

սարկման համար. նա 2030 համերգ է տվել, այդ թվում 512-ը շեֆական կարգով, որոնց ներկա են եղել մեկ ու կես միլիոնից ավելի հանդիսատեսներ: Զազնվագախումբը ելույթներ է ունեցել Մոսկվայում, Լենինգրադում, Հեռավոր Արևելքում, եղբայրական ռեսպուբլիկաների— Վրաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, Տաջիկստանի, Ղազախստանի, Մոլդավիայի մայրաքաղաքներում ու քաղաքներում: Նա

մասնակցել է 1939 թվին Մոսկվայում կազմակերպված հայ արվեստի տասնօրյակի եզրափակիչ համերգին և սխտեմատիկ կերպով ելույթներ է ունենում Հայաստանի քաղաքներում ու շրջաններում:

Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին Հայաստանի Պետական ջազնվագախումբը հարյուրավոր համերգներ է տվել Սովետական Բանակի մարտիկների համար, որի համար պարզեցվել է մի քանի պատվոգրերով, այդ թվում Մոսկվայի, Կիևի, Անդրկովկասի ղեկավարական շրջանների կողմից տրված պատվոգրերով և արժանացել է բազմաթիվ շնորհակալությունների: Պատերազմի տարիներին ջազնվագախումբը հիսունից ավելի պաշտպանական, հակաֆաշիստական և երգիծական երկեր է ստեղծել:

Ջազնվագախմբի ռեպերտուարի համար գրվել է 342 երաժշտական երկ, որոնցից շատերը ժողովրդականացել են, ինչպես օրինակ «Հայկական ռապսոդիա»-ն, «Նուրուտ», «Սար-գյալին», «Հայկական սեղաներգ»-ը և ուրիշներ:

Ներկայումս ջազնվագախումբը բաղկացած

է 30 նվագողներից, երգիչներից և պարողներից: Ավագադույն մենակատարներ, որոնք ջազնվագախմբի կոլեկտիվում աշխատում են նրա հիմնադրման օրից սկսած, հանդիսանում են ղեկավար-չուֆակահար Մ. Թադևոսյանը, հարվածող Ռ. Յուլյանը, պարողներ Օրդյան եղբայրները: Վերջին տարում ջազնվագախմբի մեջ են ընդգրկվել արտիստուհի Ա. Մալխասյանը և հայրենադարձ երգիչ-երգչուհիներ Մ. Հովհաննիսյանը, Թ. Քյոսեյանը ու Ա. Այդիջյանը:

Ներկայումս ջազնվագախումբը ուժեղ կերպով նախապատրաստվում է առաջիկա գաստրոլային ելույթների համար: Կոլեկտիվը, ստորագրելով իր բարձր պատասխանատվությունը, ապրում է ստեղծագործական վերելք: Թևակոսելով ջազնվագախմբի գործունեության երկրորդ տասնամյակը, նրա արտիստները, իրենց վրա ամենօրյա աշխատանք տանելով, կգործադրեն բոլոր ջանքերը, որպեսզի համերգային բեմից հնչեն գալափարապես հագեցած, գեղեցիկ ու մեղոդիկ երգեր:

ՀԱՊԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտը Լենինգրադի Պետական ինստիտուտի հետ համատեղ այս տարի շարունակելու է Կարմիր բլուրի ուրարտական ամրոցի պեղումները, որոնք անցյալ տարիներում հետաքրքիր արդյունքներ են տվել:

Անցյալ տարում հետազոտման են ենթարկվել ուրարտական փոխարքայի պալատի տնտեսական շենքերը և պահեստները: Հայտնաբերված են սենյակներ, որտեղ պատրաստվում էր քունջութի ձեթ. գտնված են քարե կիսատակառ, մեծ սանդ, ահագին քանակությամբ քունջութի քուսպ — որպես արտադրության մնացուկներ: Պահեստներից մեկում հայտնաբերվել է ուրարտական թից մեկում հայտնաբերվել է ուրարտական թագավոր Սարգուրի, Արգիշտիի որդու (VIII դարի կեսերը մեր էրայից առաջ) սեպագիր արձանագրություն, ունեցող բրոնզե սաղավարով՝ զարդարված զանազան պատկերներով:

1948 թվի պեղումների ժամանակ շարունակվելու են պալատի պահեստների հետազոտությունները, որոնք խոստանում են տալ

շատ հետաքրքիր նյութեր ուրարտական կուլտուրայի ուսումնասիրման համար:

Բացի դրանից սկսվելու է ամրոցի արևմտյան կողմը ընկած հնագույն քաղաքի ուսումնասիրությունը, որի տեղիտորիայի վրա պարզորոշ երևում են փողոցները և բնակելի տների թաղամասերը:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պետական պատմական թանգարանի արշավախումբը, պատմական գիտությունների թեկնածու Կ. Ղաֆադարյանի ընդհանուր ղեկավարությամբ, շարունակելու է հայկական հնագույն մայրաքաղաք Դվինի պեղումները: Գտնվում սկսվելու են Հայաստանի պատմության Արշակունյաց շրջանի (մեր էրայի մասն հնազիտական աշխատանքները: Այդ մասն հնազիտական աշխատանքները: Այդ պեղումները կնպաստեն հայկական կուլտուրայի ուսումնասիրման գործին:

Արգենու և Արազածի շրջաններում քարե դարի (պալեոլիտ) հուշարձանների հետազոտումներ են կատարվելու:

ՊԵՂՈՒՄՆԵՐ ԴՎԻՆՈՒՄ

Հունիսի վերջերին Հայկական ՍՍՌ Պետական թանգարանի հնագիտական արշավախումբը Դվին մեկնեց Հայաստանի միջնա-

դարյան մայրաքաղաքի պեղումները շարունակելու համար: Արշավախմբի կազմում կան 16 գիտական և գիտատեխնիկական

աշխատողներ: Արշավախմբի աշխատանքները ղեկավարում է պատմական գիտությունների թեկնածու Կ. Ղաֆադարյանը:

Պեղումները շարունակվելու են քաղաքի կենտրոնական մասում, Վ դարի եռանֆային բազիլիկ եկեղեցու ու կաթողիկոսի պա-

լատի շուրջը և միջնաբերդում, որտեղ գտնվում են իշխանավորների պալատները:

Հետախուզական պեղումներ են կատարվելու նաև քաղաքի զանազան մասերում՝ Դվիների հարավային սահմանները որոշելու համար:

ՆՈՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ

ՄԻԿՈՑԱՆ.— Շրջանի Արենի գյուղի մոտ սկսվել է նոր էլեկտրակայանի կառուցումը: Էլեկտրակայանը ունենալու է մեծ կարողություն, և բացի շրջանի գյուղերից, սպասարկելու է նաև Ղարաբաղլարի ու Ազիզբեկովի շրջաններին:

Մայիսի 22-ից սկսվել են շինարարության հողային աշխատանքները: Այդ օրը ջրանցքի և ջրամբարի փորման աշխատանքներին

մասնակցում էին 500 մարդ: Ջրատար առվի հողային աշխատանքը կատարում են մի շարք գյուղերի կոլխոզնիկները. յուրաքանչյուր բրիգադա, մրցության մեջ մտնելով, ձգտում է ամենից շուտ ավարտել իր տեղամասի աշխատանքները:

Նախատեսված է էլեկտրակայանի կառուցումն ավարտել ամենակարճ ժամկետում:

ԳՈՐԾԻ ԴՐՎԵՑ ՄԻԿՐՈԳԵՍԸ

Հունիսի 21-ին Բասարգեչարի շրջանի Մեծ Կարակոյուն գյուղի կոլխոզնիկները հանդիսավոր կերպով բաց արին իրենց միկրոգեսը: Գյուղի փողոցներում և բնակարաններում վառվեցին Իլյիչի լամպերը:

Մեծ Կարակոյունի կոլխոզնիկները անցյալ տարի աչքի ընկնող նվաճումներ ձեռք

բերեցին կոլխոզի հանրային տնտեսությունը ընդլայնելու և զարգացնելու ասպարեզում: Այստեղ մեկ աշխօրին բաշխվեց 6,5 կիլոգրամ հացահատիկ, ինչպես և ալլ մրթերներ ու դրամ: Ստանալով էլեկտրական տոսավորություն կոլխոզնիկների կյանքը նոր աստիճանի բարձրացավ:

ԿՈՆՍԵՐՎԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ղախանում կառուցվում է կոնսերվի գործարան, որը տարեկան արտադրելու է մեկ միլիոն պայմանական տուփ պահածո: Արդեն ավարտված են գործարանի շենքի կառուցման աշխատանքները, իսկ օժանդակ ջեխերի և բնակելի շենքի կառուցման աշխատանքները կավարտվեն հունիսի վերջին:

Մինչև հիմա շինարարության վրա ծախսված է մոտ հինգհարյուր հազար ռուբլի. ստացված է ամբողջ սարքավորումը: Գործարանը հուլիսի 1-ից սկսած արտադրանք է տալու: Մինչև տարվա վերջը նա կարտադրի 20 հազար տուփ լավորակ պահածո և մուրաբա:

ՈՒՋԲԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ԱԼԻՇԵՐ ՆԱՎՈՒԻ ԾՆՆԴՅԱՆ 500-ԱՄՅԱԿԸ

Մայիսի 15-ին Սովետական Միության ժողովուրդները նշեցին ուղբեկական գրակա-

նության հիմնադիր, մեծ բանաստեղծ Ալիշեր Նավոյի ծննդյան 500-ամյա հոբելյանը: Մոսկվայում, Միությունների Տան Սյունաղարդ դահլիճում, տեղի է ունեցել հոբելյանական հանդիսավոր երեկո, որը կազմակերպել էր ՍՍՌՄ Սովետական Գրողների միության վարչությունը: Երեկոն ներածական ճառով բացել էր ՍՍՌՄ Սովետական Գրողների միության գլխավոր քարտուղարի տեղակալ Ն. Տիխոնովը:

Ուղբեկական մեծ բանաստեղծի կյանքի և գրական գործունեության մասին հաղորդումներ են արել ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Ե. Բերտելսը

և Ուղբեկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Վ. Զախիդովը:

Ալիշեր Նավոյի ստեղծագործություններից կատարած իրենց թարգմանությունները կարդացել են բանաստեղծուհի Վ. Զվյագինցևան, բանաստեղծներ Ս. Լիպկինը, Լ. Պենկովսկին, ինչպես նաև արտիստներ Ն. Պերշինը և Օ. Ֆրելիխը:

Մեծ բանաստեղծի հոբելյանը առանձնակի շքեղությամբ է տոնվել Սովետական Ուղբեկիստանում: Տաշքենդի Ա. Նավոյի անվան օպերայի և բալետի նորակառույց թատրոնում բացվել է բանաստեղծի ծննդյան 500-ամյակին նվիրված հոբելյանական հան-

դիսավոր նիստը, որին ներկա են եղել Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից, Մինսկից, Ռիգայից, Վիլնյուսից, Թբիլիսիից, Բաքվից, Երևանից և Սովետական Միության մյուս եղբայրական ուսանողականների քաղաքներից ժամանած դիտորդներ, արվեստի ու գրականության ներկայացուցիչները:

Հորեկյանի օրերին Տաշքենդում տեղի է ունեցել Ուղբեկական ՍՍՌ Սովետական Գրողների միության պլենումը, ինչպես նաև Ուղբեկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հատուկ սեսիան՝ նվիրված Ալիշեր Նավոյի կյանքին ու գործունեությանը: Մեսիայում ղեկուցումներ են լսվել բանաստեղծի ստեղծագործությունների, աշխարհայացքի և արվեստի ժողովուրդների՝ զրականության վրա նրա թողած ազդեցության մասին:

Ուղբեկական ՍՍՌ կառավարության որոշմամբ անմահ երգչի հիշատակը հավերժացնելու նպատակով Տաշքենդում կանգնեցվելու է մեծ բանաստեղծի մոնումենտալ արձանը: Նավոյի հորեկյանը հավերժացնելու համար որոշված է նրա անվամբ կոչել նաև Տաշքենդի հանրային գրադարանը, որի կառուցումն ապարդիվելու է մոտ ժամանակներս: Հորեկյանական հանձնաժողովը հատուկ պատվիրակություն է ուղարկելու Հերաթ (Ավգանիստան), որտեղ հուշատախտակ է ամրացվելու Ալիշեր Նավոյի գերեզմանի վրա:

Հորեկյանի օրերին Տաշքենդում բացվել է բանաստեղծի կյանքն ու գործունեությունը արտացոլող ցուցահանդես:

Մոսկվայում Գեղարվեստական գրականության հրատարակչությունը ռուսերեն լեզվով լույս է ընծայել ուղբեկական մեծ բանաստեղծի ստեղծագործությունների մեկ հատորակը, որի մեջ ամփոփված են նրա հինգ պոեմները: Նույն հրատարակչությունը լույս է ընծայել «Ալիշեր Նավոյի լիրիկան» վերնագրով գիրքը: «Սովետական պիսսառ» հրատարակչությունը լույս է ընծայել բանաստեղծի ստեղծագործությունների մեկհատորակը:

Ուղբեկական գրականության հիմնադիր

Ալիշեր Նավոյի հորեկյանին լայնորեն նախապատրաստվել են նաև Սովետական Միության եղբայրական ուսանողականները:

Նավոյի ստեղծագործությունների մեկհատորակները լույս են տեսել Ուկրաինայում, Էստոնիայում, Տաշիկստանում, Ղազախստանում, Թուրքմենստանում, Կիրգիզիայում և մյուս ուսանողականներում:

Ալիշեր Նավոյի հորեկյանը մեծ շուքով



Ալիշեր Նավոյ

տոնվել է նաև Հայաստանում: Դպրոցներում կաղամակերպվել են գրական երեկոներ, ակումբներում կարդացվել են դասախոսություններ: Ա. Մյասնիկյանի անվան Հանրային գրադարանը կաղամակերպել է Նավոյին նվիրված ցուցահանդես: Հայաստանի Սովետական Գրողների միության Տան դահլիճում մայիսի 15-ին տեղի է ունեցել հանդիսավոր երեկո, նվիրված մեծ բանաստեղծի ծննդյան 500-ամյակին: Հանդիսավոր երեկոյին ներկա են եղել մայրաքաղաքի աշխատավորության, ինտելիգենցիայի ներկայա-

ցուցիչներ, գրողներ, գրականագետներ, արվեստի աշխատողներ: Նավոկի կյանքի և գրական գործունեության մասին զեկուցումով հանդիս է եկել ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր էդ. Աղայանը:

Հոբելյանի օրերին Հայպետհրատի հրատարակությամբ առաջին անգամ հայերեն լիզվով լույս է ընծայվել մեծ բանաստեղծի անմահ «Ֆարհադ և Շիրին» պոեմը Մ. Կորյունի թարգմանությամբ, Դ. Գեմիրճյանի խմբագրությամբ և Ա. Կարինյանի հառաջաբանով: Գիրքը գեղեցիկ կերպով ձևավորել է նկարիչ Ս. Ստեփանյանը:

Մեծ բանաստեղծի երկերը հագեցված են հումանիզմով, նա իր պոեմներում երգել է

Մի՛ վշտանա՛ր, քո ուռնած այն աշխարհը հրաշագեղ,
Որի նման դու չես գտնի երբևիցե մի այլ տեղ,

Մանր է ինձ այն աշխարհը, ինքս եղել եմ այնտեղ,
Ես չեմ տեսել ողջ աշխարհում նրա նման սիրուն տեղ:

Բնությունը անմահական, անչափ առատ վարդեր կան,
Եղեմային այն աշխարհին անվանում են Հայաստան:

Նավոկին իր բանաստեղծական անմահ փառքը նվաճել է հինգ պոեմներով, որոնք ընդգրկված են «Խամսա» (հնգյակ) վերնապրոլի ժողովածուի մեջ: Այդ պոեմներն են— «Արդարեւե՛րի սփռնալույսը», «Լեյլի ու Մեջնուն», «Ֆարհադ և Շիրին», «Յոթ մոլորակ», «Ալեքսանդրյան պարիսպը»:

Նավոկի երկերի ձեռագրերի ամենամեծ հավաքածուն աշխարհում պատկանում է Ուզբեկական ՄՍՄ Գիտությունների Ակադեմիայի Արևելյան ձեռագրերի ուսումնասիրման ինստիտուտին: Այստեղ հաշվվում է ունիկոմային արժեք ունեցող 276 ձեռագիր. սերանց թվում «Խամսա»-ն՝ արտագրված 1484 թվին Հերաթում, Արդուշեմիլի կողմից. այս ձեռագիրն ունի 325 թերթ (650 էջ) և հավանական է համարվում, որ սա հանդիսանում է պոետի ձեռագրից արտագրված մաքրագիր օրինակը: Նույնչափ ուշագրավ ձեռագիր է հանդիսանում Նավոկի բանաստեղծությունների ժողովածուն, որը հայտնի է «Մանկության ոտանավորների ժողովածու» անվան տակ: Սա արտագրված է պոետի կենդանության օրոք, 1492—93 թվականներին: «Ոտանավորների ժողովածու»-ն XV

ժողովուրդների բարեկամությունը, նրա ցամաքագործություններում կարելի է հանդիպել շատ ժողովուրդների ներկայացուցիչների— և՛ չինացու, և՛ արաբի, և՛ հայի և՛ հուսիսային, և՛ եգիպտացու, և՛ հունի, և՛ սլավոնի...:

Իր «Ֆարհադ և Շիրին» հիանալի պոեմում Նավոկին մեծ սիրով ու զգացմունքով է նկարագրում օտարերկրյա դաժան լծի տակ հեծող չքնաղ Հայաստանը: Պոեմի հերոս Ֆարհադը ոչ միայն սիրում է հայուհի Շիրինին, այլ և Հայաստանն ու հայ ժողովուրդին. նա Հայաստանը դիտում է որպես իր հայրենիքը և պաշարի է ելնում նրա թշնամիների դեմ: Ահա ինչպիսի հիասքանչ տողեր է նվիրել Նավոկին Հայաստանին.—

դարի Հերաթի արվեստի գլուխ գործոցն է
հանդիսանում: XV դարի վերջի և XVI դարի սկզբի ձեռագրերից հիշատակության արժանի է «Զորս դիվան»-ը այսինքն բանաստեղծությունների ժողովածուն:

Նավոկի երկերի ձեռագիր օրինակները պահվում են ոչ միայն Տաշքենդում, այլ և ՍՍՄ Գիտությունների Ակադեմիայի Լենինգրադի արևելագիտության ինստիտուտում և Մալթիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանում, ինչպես նաև Կազանի, Ստալինաբադի և Թբիլիսիի գրադարաններում:

Հայկական ՍՍՄ Մատենադարանում պահվում է Ալիշեր Նավոկի պոեմների, գազելների ու ոտանավորների ժողովածուի ունիկոմային ձեռագիրը: Ժողովածուն արտագրված է 1499 թվին Մուհամեդ Քաթիպ Ալ-Գումիլի կողմից, ձեռագրի ծավալն է 217 թերթ (մոտ 11 հազար տող). թերթի երկարությունն է 20 սմ, լայնությունը 14 սմ:

Դրանից բացի Նավոկի բանաստեղծությունները գտնվում են Մատենադարանում պահվող նաև արևելյան այլ ժողովածուների մեջ:

